ՌՈԲԵՐՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
ՀՊՏՀ ՄՏՀ ամբիոնի ասպիրանտ

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԵՎ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ*

Եվրասիական տնտեսական միության՝ որպես տարածաշրջանային ինտեգրման խմբավորման կայացումն ու զարգացումը անխուսափելիորեն ենթադրում է իրավական փաստաթղթերի համալիրի միջոցով իրացվող ինստիտուցիոնալ կարգավորման անհրաժեշտություն, որը պահանջում է համապատասխան կառուցվածք, քաղաքական և տնտեսական գործընթացներ: Այդ տեսանկյունից ուշագրավ է ԵԱՏՄ ստեղծման պայմանագիրը, որը սահմանում է պետությունների փոխհարաբերությունների կարգավորման տնտեսական, կառավարչական և իրավական հիմքերը:

Հիմնաբառեր. *տնտեսական դիվանագիտություն, պայմանագիր, ինտեգրման խմբավորում, իրավական կարգավիճակ, բանակցություններ, հուշագիր, համագործակցություն*

JEL: F0, F01, F19

Եվրասիական տնտեսական միությունը իրավական տեսանկյունից դիտարկելիս անհրաժեշտ է, ամենից առաջ, տնտեսական դիվանագիտության ենթատեքստում ուսումնասիրել այդ ինտեգրման խմբավորման իրավական ձևակերպումը: Ինչպես արդեն նշել ենք, Եվրասիական տնտեսական միությունը գործում է 2015 թվականի հունվարի 1-ից՝ դրա ստեղծման մասին պայմանագրի համաձայն, որը ստորագրվել է 2014 թվականի մայիսի 29-ին Ղազախստանի մայրաքաղաք Աստանայում երեք պետությունների՝ Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության և Ռուսաստանի

* "The European Commission support for the production of this publication does not constitute an endorsement of the contents which reflects the views only of the authors, and the Commission cannot be held responsible for any use which may be made of the information contained therein."

Դաշնության նախագահների կողմից: Քանի որ Եվրասիական տնտեսական միությունը միջազգային տարածաշրջանային ինտեգրացիոն կազմակերպություն է, ուստի դրան հատուկ են միջկառավարական կազմակերպություններին բնորոշ դասական տարրեր, այնպիսիք, ինչպիսիք են հիմնադիր փաստաթուղթը, նպատակներն ու ինստիտուցիոնալ կառուցվածքը, սկզբունքները, անդամակցությունը և այլն:

Իրավունքի գերակայության գաղափարը, որը միջազգային հարաբերությունների ընդհանուր սկզբունքն է, այս դեպքում հստակորեն արտացոլվում է իրավական գործընթացների շարունակականության և զարգացման մեջ: Միջազգային իրավունքն այն միջոցն է, որը չափում է թույլատրելին և միջազգային հարաբերությունների ցանկացած բնագավառում համարվում է սուբյեկտների վարքագծի իրավական հավաստման չափանիշը[1]: Միության շրջանակներում ստեղծվում է միասնական իրավական միջավայր և տնտեսական տարածք, որտեղ պետք է իրականացվի անդամ պետությունների ֆիզիկական և իրավաբանական անձանց գործունեությունը:

Տնտեսական միության իրավական կարգավիճակի տեսանկյունից կարևոր նշանակություն ունի դրա ստեղծման նպատակը: Հատկանշական է, որ ԵԱՏՄ-ն ստեղծվել է հիմնականում որպես տնտեսական միություն, ուստի դրա գերխնդիրը ազգային տնտեսությունների արդիականացումն ու բազմազանեցումն է, մրցունակության բարձրացումը, մասնակից երկրների փոխադարձ առևտրի կառուցվածքի բարելավումը, հումքային ապրանքաշրջանառությունից անցումը բարձր ավելացված արժեք ունեցող ապրանքներին: Այդ պայմաններում միության կառավարման անմիջական գործիքներն են դառնում վերպետական մարմնի որոշումները, որոնց իրացումը պարտադիր է բոլոր անդամ երկրների համար:

Պայմանագրի 1-ին հոդվածի 2-րդ կետում ամրագրված է, որ միությունը միջազգային իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող տարածաշրջանային տնտեսական ինտեգրման միջազգային կազմակերպություն է[2]: Պայմանագիրը գրանցված է Միավորված ազգերի կազմակերպության քարտուղարությունում՝ կանոնադրության 102-րդ հոդվածի համաձայն: Այս հանգամանքը իրավական հիմք է տալիս ԵԱՏՄ-ն որակել որպես համադաշնակցային (կոնֆեդերատիվ) պետություն, ինչը բնական է, քանի որ միջազգային պայմանագրերն ու համաձայնագրերը պարտավոր են գրանցել, առաջին հերթին, ՄԱԿ-ի անդամ երկրները, որոնք ունեն միջազգայնորեն ճանաչված իրավաբանական անձի կարգավիճակ, այսինքն՝ միջազգային իրավունքի սուբյեկտներ են: Ընդ որում, ԵԱՏՄ-ն լիարժեք իրավաբանական անձ չէ, ինչպես անկախ պետություններն են, և դա սահմանափակված է ԵԱՏՄ պայմանագրում առաջադրված նպատակներով ու խնդիրներով:

Այս փաստաթուղթը տրամադրում է դրույթների լայն շրջանակ, որոնք ԵԱՏՄ-ին տալիս են դաշնային (ֆեդերալ) բնույթ: Դրան նպաստել է միության անդամ պետություններին կամավոր այնպիսի լիազորությունների տրամադրումը, որոնք թույլ են տվել ստեղծել միասնական վերպետական իշխանություն, մաքսային և տնտեսական տարածք, համաձայնեցնել մակրոտնտեսական կարգավորման հարցերը և այլն: Այդ պայմաններում, փաստորեն,

---

[1] Տե՛ս **Klabbers J.,** Two Concepts of International Organization // International Organizations Law Review, N 2, 2005, էջ 277–293:

[2] Տե՛ս http://www.consultant.ru/cons/cgi/online.cgi?req=doc&base=LAW&n=212769&fld=134&dst=100001,0&rnd=0.27731225282938476#006284928791036593

ԵԱՏՄ-ն ունի վերպետական իրավասություն, ուստի տնտեսական և քաղաքական անկախության միջև իրավաբանական անհամապատասխանություն չի ծագում:

ԵԱՏՄ իրավական կարգավիճակը բնութագրելիս պետք է հաշվի առնել, որ, ըստ պայմանագրի տեքստի վերլուծության, այն շատ ավելի հիմնարար է, քան կարող է հանդես գալ որպես կողմերի ազատ կամարտահայտության փաստացի դրսևորում: Պայմանագրի համաձայն՝ միության կարգավիճակի հիմքը դրա առանցքային սկզբունքներն են, նպատակները, իրավասությունները և իրավունքը: Վերլուծելով պայմանագրի 3-րդ հոդվածի դրույթները՝ պետք է նշել, որ իրավասությունների և իրավունքի սահմանումն ու գրանցումը ինտեգրացիոն միավորման իրավական հիմքն են: Այստեղ կարևորվում է միության կենսագործունեության համար կարևոր սկզբունքների հստակ սահմանումը: Դրանց թվում են՝

- միջազգայնորեն համընդհանուր ճանաչված իրավունքի սկզբունքներն ընդունելը, ներառյալ՝ անդամ պետությունների ինքնիշխան հավասարության սկզբունքները և դրանց տարածքային ամբողջականությունը,
- քաղաքական կառուցվածքի առանձնահատկությունները հաշվի առնելը,
- կողմերի փոխշահավետ համագործակցությունը, հավասարությունը և ազգային շահերը դիտարկելը,
- շուկայական տնտեսության սկզբունքներն ու արդար մրցակցությունը պահպանելը,
- անցումային շրջանի ավարտից հետո մաքսային միության գործունեության իրականացումն առանց բացառությունների և սահմանափակումների:

Թվարկած սկզբունքներից բխում են միության հիմնական նպատակները, որոնք ամրագրված են պայմանագրի 4-րդ հոդվածում՝

- բնակչության կենսամակարդակի բարելավման նպատակով անդամ պետությունների տնտեսությունների կայուն զարգացման համար պայմանների ստեղծում,
- միության շրջանակներում ապրանքների, ծառայությունների, կապիտալի և աշխատանքային ռեսուրսների միասնական շուկա ստեղծելու ձգտում,
- գլոբալ տնտեսության պայմաններում ազգային տնտեսությունների համապարփակ արդիականացում, կոոպերացման և մրցունակության բարձրացում:

Պայմանագրի տեքստում հստակ սահմանվում են այն իրավասությունները, որոնք ապահովում են միության իրավական անձեռնմխելիությունը: Դրանք հանդես են գալիս որպես միության նորմալ գործունեությունը և զարգացումը խաթարող իրավական սպառնալիքների խոչընդոտներ: Պայմանագրում իրավասությունները բովանդակում են երեք խումբ խնդիրներ. միության բացառիկ իրավասությունը, մասնակից պետությունների համատեղ իրավասությունը և օժանդակ իրավասությունը:

Առավել ընդհանուր կարգով միության իրավասությունը սահմանված է պայմանագրի 5-րդ հոդվածում, որտեղ, մասնավորապես, ասվում է. «Միության բացառիկ իրավասությունը բխում է Պայմանագրի դրույթներից և դրա շրջանակներում կնքված միջազգային պայմանագրերից: Միության անդամ

պետությունների համատեղ իրավասության աղբյուրը նույնական է ընդհանուրի հետ և արտահայտվում է միության շրջանակներում համաձայնեցված և փոխպայմանավորված քաղաքականության իրականացման միջոցով: Օժանդակ իրավասությունը տարածվում է տնտեսության այն ոլորտների վրա, որտեղ անդամ-պետությունները ձգտում են իրականացնել միասնական քաղաքականություն՝ միության հիմնական նպատակներին և սկզբունքներին համապատասխան: Իրավասությունների անմիջական կրողները համապատասխան ուղղությունների օժանդակ մարմիններն են՝ կողմերի պետական մարմինների ղեկավարների խորհուրդները, աշխատանքային խմբերը և մասնագիտացված հանձնաժողովները»: Պայմանագրում լրացուցիչ ամրագրվում են նաև պետությունների միջև արդեն գոյություն ունեցող այն հարաբերությունները, որոնք ծագել են Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքի շրջանակներում: Միության մասին պայմանագրում արտացոլված են նախորդ համաձայնագրերի իրավական դրույթները՝ առանց էական փոփոխությունների, ինչը վկայում է այդ դրույթների նկատմամբ կողմերի բավարարվածության մասին: Դա նաև փաստում է, որ պայմանագիրն ավելի շուտ տնտեսական է, քան քաղաքական:

Միության կարևոր առանձնահատկություններից է ազգային սահմանների անձեռնմխելիությունը և ցանկացած հակամարտության լուծման դեպքում միջազգային իրավունքի, խաղաղության և բարիդրացիության սկզբունքներին խստորեն հետևելը: Անհրաժեշտ է նշել, որ առկա են մի շարք խնդիրներ, որոնք ունեն սահմանային բնույթ և միաժամանակ գտնվում են միասնացման տնտեսական և քաղաքական կառավարման ներքո: Դրանք ներառում են շրջակա միջավայրի պահպանությունը, կոլեկտիվ անվտանգությունը, առողջապահական խնդիրների լուծումը, դեղորայքի և բժշկական արտադրանքի գրանցումը, սպառողների պաշտպանությունը, միջուկային էներգիայի և նոր տեխնոլոգիաների, սպորտի և զբոսաշրջության, մշակույթի և կրթության ոլորտների հիմնախնդիրները:

ԵԱՏՄ իրավական կարգավիճակում կարելի է ընդհանուր ձևով առանձնացնել երկու խումբ բնութագրեր՝ ինստիտուցիոնալ և նյութական: Առաջին խումբը, որը պայմանականորեն կարելի է անվանել միության միջազգային կամ առաջնային իրավունք, սահմանում է Եվրասիական տնտեսական միության անկախ և հավասար իրավական կարգավիճակը միջազգային իրավունքի այլ սուբյեկտների հետ: Երկրորդ՝ նյութական իրավունքի խումբը բնութագրում է միության անդամների միջև փոխհարաբերությունները հաստատող ներքին իրավական ռեժիմը:

Սակայն հարկ է նշել, որ ինտեգրման կառույցում նոր իրավակարգի ձևավորումը և դրա գործունեության պահպանումը պահանջում է բարձր մակարդակի կազմակերպականություն և վերահսկողություն: Ներկայում դա ԵԱՏՄ զարգացման և բարեհաջող գործարկման առանցքային խնդիրն է, որի լուծումից է կախված միության միջազգային իրավական կարգավիճակը: Այդ պայմաններում առաջանում է ԵԱՏՄ քաղաքական և իրավական ինստիտուտների ձևավորման և զարգացման անհրաժեշտություն, որոնք օբյեկտիվորեն չեն կարող իրականացվել միայն ազգային օրենսդրությունների ներդաշնակեցման և միօրինականացման հիման վրա և պահանջում են քայլեր, որոնք ուղղված կլինեն նաև միասնական օրենքներ, միատեսակ ակտեր ստեղծելուն:

Եվրասիական տնտեսական միությունը հենվում է առևտրատնտեսական համագործակցության վերաբերյալ անդամ երկրների միջև ազատ առևտրային, մաքսային գոտիների և ԵԱՏՄ արտաքին գործընկերների հետ տնտեսական համագործակցության համաձայնագրերի վրա: Վերջիններս արտոնյալ պայմաններով արտաքին շուկաներ թափանցելու, արտահանումը խթանելու և ներդրումներ ներգրավելու արդյունավետ գործիքներ են: Սա եվրասիական բիզնեսը համընդհանրական արտադրական շղթաների մեջ ընդգրկելու, դրա մրցունակության մակարդակը բարձրացնելու, միջազգային առևտրային ռիսկերը նվազեցնելու և բազմազանեցնելու կարևոր պայմանն է: Այդ տեսանկյունից առաջինը ստեղծվեց և գործարկվեց Վիետնամի հետ ազատ առևտրի գոտին: Համաձայնագիրը ստորագրվել է 2015 թ. մայիսի 29-ին: Ազատ առևտրային գոտու ստեղծման դրական արդյունքը եղել է այն, որ Վիետնամի հետ ԵԱՏՄ ապրանքաշրջանառությունը 2017 թ. աճել է 36%-ով՝ 2016 թ. 4.3 մլրդ դոլարից հասնելով 5.9 մլրդ դոլարի: Ներմուծումն աճել է 34,7%-ով, իսկ արտահանումը՝ 39,5%-ով: Ընդ որում, Վիետնամի հետ Հայաստանի և Ղրղզստանի առևտուրը սկսել է զարգանալ զրոյից և էական արդյունքներ է արձանագրել[3]:

Բացի մաքսատուրքերի նվազեցումից, Վիետնամի հետ կնքված համաձայնագրում ամրագրված են մտավոր սեփականության պաշտպանության պարտավորություններ, սահմանվել են կայուն զարգացման, էլեկտրոնային առևտրի և պետական գնումների ոլորտներում համագործակցության ուղղություններ, ինչպես նաև հաստատվել են մրցակցության պաշտպանության միասնական սկզբունքներ, ծառայությունների առևտրի փոխադարձ ազատականացման, ներդրումների իրականացման և ֆիզիկական անձանց տեղաշարժի պարտավորություններ:

2015 թ. հոկտեմբերին Եվրոպական հանձնաժողովի նախագահին ԵԱՏՄ անդամ պետությունների ղեկավարների կողմից ուղարկվել է «ԵԱՏՄ–ԵՄ. համագործակցության շրջանակները» հուշագիրը, որտեղ առաջարկվել է փորձագիտական մակարդակով անցկացնել «զրոյական փուլի» բանակցություններ: Արտաքին գործընկերների հետ համագործակցության զարգացման ռազմավարությունը և համապատասխան պլանները սահմանվել են պետությունների ղեկավարների կողմից հաստատված «Եվրասիական տնտեսական միության միջազգային գործունեության հիմնական ուղղությունները» տարեկան ծրագրում:

Տնտեսական դիվանագիտության զարգացման տեսանկյունից հատկապես արգասաբեր է 2018 թվականը: Այդ առումով, հատկանշական է, որ Եվրասիական տնտեսական հանձնաժողովը ԵԱՏՄ անդամ երկրների հետ արդեն մշակում է տնտեսական միության շրջանակներում միասնացման գործընթացների հետագա ընդլայնման հայտարարությունը (դեկլարացիա): 2018 թ. մայիսի 14-ին Սոչիում կայացավ ԵԱՏՄ անդամ պետությունների ղեկավարների հանդիպումը, որտեղ ընդունվեցին մի շարք կարևոր որոշումներ, այդ թվում՝ հանձնաժողովին տրված հանձնարարությունն այն մասին, որ վերջինս, անդամ պետությունների հետ միասին ընթացիկ տարում պետք է մշակի ԵԱՏՄ շրջանակներում ինտեգրման գործընթացների հետագա խորացմանն ուղղված հայտարարությունը: Դա հնգյակի երկրների համար

[3] Տե՛ս http://www.eurasiancommission.org/ru/nae/news/Pages/19-06-2018-2.aspx

պետք է դառնա երկարաժամկետ հեռանկարի վերաբերյալ հիմնարար փաստաթուղթ:

Սոչիում կայացած հանդիպմանը հետևեցին մի շարք իրադարձություններ, որոնք նշանավորեցին միության տնտեսական համագործակցության ընդլայնման ուղղությամբ գործնական քայլերի հաջորդականությունը: Այսպես՝ մայիսի 24-ին Լատինամերիկյան տնտեսական համակարգի մշտական քարտուղար Խավեր Պաուլունիչի հետ կնքվեց փոխըմբռնման հուշագիր, որը սահմանում է Եվրասիական և Լատինամերիկյան տարածաշրջաններում երկու տնտեսական կազմակերպությունների փոխազդեցության շրջանակային մեխանիզմները: Մայիսի 28-ին Եվրասիական տնտեսական հանձնաժողովի և Կամբոջայի Թագավորության միջև կնքվեց փոխգործակցության հուշագիր, Կուբայի Հանրապետության և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի միջև՝ Փոխըմբռնման հուշագիր:

Դեռևս 2017 թ. դեկտեմբերի 21-ին ԵԱՏՄ պատվիրակության և Եգիպտոսի կառավարության միջև սկսվել են բանակցություններ Ազատ առևտրի գոտու համաձայնագիր ստորագրելու մասին: Կողմերը պայմանավորվել են բանակցությունների լայնածավալ փուլ սկսել ընթացիկ տարվա աշնանը: Ներկայումս դիտարկվում է երկրների միջև ապրանքաշրջանառության դրական դինամիկա: 2017 թ., 2016 թ. համեմատությամբ, ԵԱՏՄ երկրների արտահանումը Եգիպտոս աճել է 63.1%-ով և կազմել 6.3 մլրդ դոլար, ներմուծումն աճել է 41.5%-ով և կազմել 589.9 մլն դոլար[4]:

Մայիսին ԵԱՏՄ-ի և Հնդկաստանի կառավարության միջև քննարկվել են նախորդ տարում Դելիում կայացած խորհրդակցությունների տեխնիկական արդյունքները, որոնք վերաբերում են Ազատ առևտրի գոտու համաձայնագրի նախապատրաստմանը: Ըստ գոյություն ունեցող վիճակագրության՝ 2017 թ., 2016 թ. համեմատությամբ, երկու երկրների միջև ապրանքաշրջանառությունն աճել է 23%-ով՝ 8.8 մլրդ դոլարից հասնելով 10.8 մլրդ դոլարի[5]:

ԵԱՏՄ-ի և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության միջև Առևտրատնտեսական համագործակցության մասին համաձայնագիրը ստորագրվել է 2018 թ. մայիսի 17-ին՝ Աստանայի տնտեսական ֆորումի շրջանակներում: Նույն օրը ստորագրվել է ժամանակավոր համաձայնագիր, որը հանգեցնելու է ԵԱՏՄ-ի և Իրանի Իսլամական Հանրապետության միջև ազատ առևտրային գոտու ձևավորմանը: Նախատեսված է Ազատ առևտրի համաձայնագիր ստորագրել նաև Սինգապուրի կառավարության հետ:

Օգտագործված գրականություն

1. Вишняков В.Г., Правовые проблемы становления ЕврАзЭС // Журнал российского права, № 10, 2001.
2. Ковалев А.А., Черниченко С.В., Международное право. М., 2006.
3. Klabbers J., Two Concepts of International Organization // International Organizations Law Review, N 2, 2005.
4. http://www.consultant.ru/cons/cgi/online.cgi?req=doc&base=LAW&n=212769&fld=134&dst=100001,0&rnd=0.27731225282938476#006284928791036593
5. http://www.eurasiancommission.org/ru/nae/news/Pages/19-06-2018-2.aspx
6. http://www.eurasiancommission.org/ru/nae/news/Pages/24-05-2018-3.aspx

[4] Տե՛ս http://www.eurasiancommission.org/ru/nae/news/Pages/24-05-2018-3.aspx
[5] Տե՛ս http://www.eurasiancommission.org/ru/nae/news/Pages/24-05-2018-2.aspx

РОБЕРТ АЙРАПЕТЯН
Аспирант кафедры МЭО АГЭУ

Правовой статус и политика расширения Евразийского экономического союза.– Создание и развитие Евразийского экономического союза как региональной интеграционной группы неизбежно подразумевает необходимость институционального регулирования посредством комплекса правовых документов, требующих надлежащей структуры, политических и экономических процессов. С этой точки зрения заслуживает внимания Договор о создании Союза, в котором изложены экономические, управленческие и правовые основы регулирования межгосударственных отношений.

Ключевые слова: *экономическая дипломатия, договор, интеграционная группировка, правовой статус, переговоры, меморандум, сотрудничество.*
JEL: F0, F01, F19

ROBERT HAYRAPETYAN
Post-graduate at the Chair of IER at ASUE

Legal Status and Policy of Expansion of the Eurasian Economic Union.– The creation and development of the Eurasian Economic Union as a regional integration group inevitably implies the need for institutional regulation through a set of legal documents that require proper structure, political and economic processes. From this point of view, the Treaty on the Establishment of the Union, which outlines the economic, administrative and legal bases for regulating interstate relations, deserves attention.

Key words: *economic diplomacy, treaty, integration grouping, legal status, negotiations, memorandum, cooperation.*
JEL: F0, F01, F19